

ՀՐԱՄԱՆ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ

ք. Երևան

N 637-Ա

07 05

2009թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
ԳԼՈՒԲԱԼ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԾՐԱԳՐԵՐԻ՝ ՏՈՒԲԵՐԿՈՒԼՈՋ,
ՄԻԱՎՉԻԱՀ, ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՀՉՈՐԱՑՈՒՄ,
ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՂ ԽՈՒՄԲԸ ԱՇԽԱՏՈՂՆԵՐՈՎ ՀԱՄԱԼՐԵԼՈՒ
ՆՊԱՏԱԿՈՎ ՍՐՑՈՒՅԹ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի օգոստոսի 15-ի N 1300-Ն որոշմամբ հաստատված Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության կանոնադրության 12-րդ կետի «դ» ենթակետը, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի դեկտեմբերի 28-ի N52 արձանագրային որոշմամբ հաստատված «2007-2015 թվականների Տուբերկուլոզի դեմ պայքարի ազգային ծրագրի» դրույթները, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության և Գլոբալ Հիմնադրամի միջև կնքված համաձայնագրերը՝

Հ Ր Ա Մ Ա Յ ՈՒ Մ Ե Մ՝

1. Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության Գլոբալ հիմնադրամի ծրագրերի՝ Տուբերկուլոզ, ՄԻԱՎՉԻԱՀ, Առողջապահական համակարգի հզորացում, իրականացման համակարգող խումբը աշխատողներով համալրելու նպատակով կազմակերպել մրցույթ (այսուհետ՝ Մրցույթ)՝ ստեղծելով մրցութային հանձնաժողով հետևյալ կազմով՝

Ա.Մանուկյան - Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարի տեղակալ /Հանձնաժողովի նախագահ/

Վ.Պողոսյան - Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության աշխատակազմի բժշկական օգնության կազմակերպման վարչության պետ, Տուբերկուլոզի դեմ պայքարի ազգային ծրագրի ղեկավար

- S.Սահակյան - Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության աշխատակազմի գիտության, կրթության և անձնակազմի կառավարման վարչության պետ
- Ա.Կարապետյան - Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության աշխատակազմի առողջապահության էկոնոմիկայի և հաշվապահական հաշվառման վարչության պետ
- Ս.Իրբե - ՄԻԱՎ/ԶԻԱՀ-ի, Տուբերկուլոզի, և Մալարիայի դեմ պայքարի Գլոբալ հիմնադրամի Արևմտյան Եվրոպայի և Կենտրոնական Ասիայի պորտֆոլիո մենեջեր /համաձայնեցմամբ/
- Բ.Քրեյֆ - «Հայաստանի ամերիկյան համալսարան»-ի կրտսեր պրոֆեսոր, հանրային առողջապահության մագիստրոսի ծրագրի համակարգող /համաձայնեցմամբ/
- Ա.Շաբարյան - «Առողջ և ներդաշնակ ընտանիք» հասարակական կազմակերպություն /համաձայնեցմամբ/
- Ն.Իզիբյան - «Մալարիա բժշկական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության ֆիզիատոր, պոլիկլինիկական ծառայությունների գծով փոխտնօրեն, «Փրկենք երեխաներին տուբերկուլոզից» հասարակական կազմակերպության փոխնախագահ /համաձայնեցմամբ/
- Ներկայացուցիչ - «Բժիշկներ առանց սահմանների» Ֆրանսիա Հայաստանյան առաքելություն /համաձայնեցմամբ/

2. Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության աշխատակազմի գիտության, կրթության և անձնակազմի կառավարման վարչության պետ S.Սահակյանին՝

1) 5-օրյա ժամկետում մշակել Ծրագրերը համակարգող խմբի թափուր պաշտոնների զբաղեցման համար գրավոր քննության թեստերը, ինչպես նաև հարցազրույցի համար նախատեսված հարցաշար՝ համագործակցելով Ծրագրերը համակարգող խմբի աշխատողների հետ:

3. Մրցութային հանձնաժողովին՝

1) Մրցույթն անցկացնել Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության կողմից սահմանված կարգով:

4. Ընդունել ի գիտություն, որ Միացյալ ազգերի կազմակերպության ծրագրային ծառայությունների գրասենյակի ներկայացուցիչ Ա.Ասլանյանը ներկա է գտնվելու Մրցույթին որպես դիտորդ:

5. Սույն հրամանի կատարման հսկողությունը ստանձնում եմ ինքս:



Հ.ՔՈՒՇԿՅԱՆ